Արձանագրության 3

Երևան քաղաքի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի փողոցի վերջնամասից մինչև Ռուբինյանց փողոցի փակուղի միացնող ճանապարհի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/31» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

27.10.2017թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գուլյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Դավթյան /գնահատող/, Գ. Մարտիրոսյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Տ. Երանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված տեղեկատվության և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Գ. Գուլյան)

1.1 Ընդունել ի գիտություն որ.

1.1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է տեղեկատվություն՝ համաձայն որի մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.1.2 «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/31» ծածկագրով բաց մրցույթի առաջին տեղ զբաղեցնող մասնակիցը՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում /26.10.2017թ./ ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,

- Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին,
- Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Բաց մրցույթի ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Գուլյան)

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բաց մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

- Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/31» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Գույան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/31» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակից հայտարարել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի փողոցի վերջնամասից մինչև Ռուբինյանց փողոցի փակուղի միացնող ճանապարհի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման** աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Գ. Գույան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Գ. Գույան

Անդամներ՝ ..... Ս. Դավթյան

..... Գ. Մարտիրոսյան

..... Ա. Հարությունյան

..... Տ. Երանյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան